ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«09» հոկտեմբերի 2019 թվականի N:242 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ,
ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով զբաղեցնող Միեր Հարությունյանին գործուղել.
   1) 2019 թվականի հոկտեմբերի 11-ին և 14-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայր՝ «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու,
   2) 2019 թվականի հոկտեմբերի 15-ին և 16-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան բնակավայր՝

«Կարմրավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու:

2. Մուշեղ Մուրադյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և Միեր Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է